«1=4» ԱԿՑԻԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

1. «1=4» ակցիային մասնակցության և ակցիայի անցկացման կարգը

1.1. «1=4» ակցիան (այսուհետ՝ Ակցիա) կազմակերպվում է «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից միասնական տոմսային համակարգի շրջանակներում հաճախորդների ներգրավվածությունն ու իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

2. Հիմնական հասկացություններ

2.1. **Telcell Wallet (այսուհետ՝ նաև TW հավելված)՝** էլեկտրոնային փողով վճարումների ընդունման, դրամական փոխանցումների և առցանց այլ գործարքների կատարման համար Ընկերության թողարկած բջջային հավելված:

2.2. **Մասնակից՝** ցանկացած ֆիզիկական անձ, ով Ակցիայի ժամկետի ընթացքում սույն կանոնների համաձայն Telcell Wallet բջջային հավելվածի միջոցով առաջին անգամ կատարել է ուղետոմսի (ավտոբուս և մետրո) դիմաց վճարում:

2.3. **Ակցիայի ժամկետ**՝ 2025թ. հունվարի 10-ից մինչև 2025թ. հունվարի 31-ը ներառյալ:

2.4. **Վճարում**՝ Telcell Wallet-ով մետրոպոլիտենի, ավտոբուսի ուղետոմսի դիմաց վճարում:

3. «1=4» ակցիային մասնակցության և ակցիայի անցկացման կարգը

3.1. Ակցիայի շրջանակներում Մասնակցին տրամադրվում է թվով 3 (երեք) հատ ուղետոմսի (ավտոբուս և մետրո) տրամադրում, որպես նվեր:

4. Այլ պայմաններ

4.1. Ընկերությունն իրավունք ունի միակողմանի իր հայեցողությամբ իրականացնել սույն Կանոնների ցանկացած պայմանի ցանկացած փոփոխություն, որի մասին տեղեկացնում է իր www.telcell.am կայքում:

4.2. Ակցիայի Մասնակիցը սույնով տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի մարքեթինգային և օրինական այլ նպատակներով օգտագործել Մասնակցի տվյալները, որոնք Մասնակիցը տրամադրել է Ընկերությանը:

4.3. Ընկերությունն իրավունք ունի Մասնակցին ուղարկել տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ՝ թե՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, թե՛ նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով: Սույնով Մասնակիցը տալիս է նմանատիպ հաղորդագրություններ ստանալու համաձայնություն:

4.4. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել Մասնակցի տվյալների ստուգում՝ Ընկերության ներքին իրավական ակտերի համաձայն: Բացի այդ, Ընկերությունն իրավունք ունի Մասնակցից պահանջել ներկայացնել անձը հաստատող, ինչպես նաև Մասնակցին նույնականացնող անհրաժեշտ այլ փաստաթղթեր ու տվյալներ: Նույնականացնող փաստաթղթերի և տվյալների տեսակներն ու ներկայացման ձևերը սահմանում է Ընկերությունը:

4.5. Ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում այն տեղեկատվության համար, որը Մասնակիցը մուտքագրում է, ինչպես նաև այն գործողությունների համար, որոնք իրականացվում են այդ տեղեկատվության հիման վրա: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում համապատասխան համակարգերի, ինչպես նաև օգտագործվող կայքի, սոցիալական ցանցերի աշխատունակության համար և չի երաշխավորում դրանց անխափան աշխատանքը:

5. Ընկերության վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հարկային հաշվառում՝	ՀՎՀՀ 02703102
Վեբ-կայք՝	www.telcell.am
Էլ.հասցե՝	info@telcell.am
Հեռախոս՝	+374 (60) 27-22-25